

ԳՐՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գ. Լ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆ—ՇԱՂԿԱՊՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԳԼ հրատարակություն, 1963, 362 էջ

Վերջին ժամանակներս համակողմանիորեն և ընդարձակ պլանով ուսումնասիրվում են ժամանակակից հայերենի խոսքի մասերը, Ա. Աբրահամյանի թրայը ժամանակակից հայերենում օտարաբանությունները և արժեքավոր աշխատությունից հետո արդեն հրապարակի վրա է Գ. Գարեգինյանի մենագրությունը արդի հայերենի շաղկապների մասին, որը ծավալուն ուսումնասիրման առաջին լուրջ փորձն է ժամանակակից հայերենի շաղկապների և շաղկապական բառերի ձևաբանական առանձնահատկությունների և նրանց կիրառությունների ու նշանակությունների մասին: Այդ լիմաստով այս մենագրությունը հայտնի յափով նախադրյալներ է ստեղծում ժամանակակից հայերենի գիտական շարահյուսության, հատկապես՝ բարդ նախադասությունների կառուցվածքի ուսումնասիրության համար. մի բան, որի պահանջը խիստ զգացվում է:

Ի տարբերություն անվանի հայագետ Մանուկ Աբեղյանի «Աշխարհարարի շարահյուսությունը» արժեքավոր աշխատության, որտեղ ուսումնասիրված են մեր լեզվի շաղկապները ավելի քան հիսուն տարի առաջ, Գ. Գարեգինյանը ընդարձակ պլանով քննության է առել լեզվի փոփոխությունների հետ կապված շաղկապների արտահայտած իմաստային հարաբերությունները, նրանց շարահյուսությունն ու բայի եղանակա-ժամանակային ձևերի նշանակության դրսևորումները, ոճական կիրառության ոլորտները գեղարվեստական, հրապարակախոսական, գիտատեխնիկական նույնիսկ բարբառային գործածության մեջ, նրանց հարաբերակցությունը կապերի հետ և այլն: Բնական է, որ այսպիսի ընդարձակ ուսումնասիրության համար հեղինակը օգտագործել է ոչ միայն գեղարվեստական, այլև հրապարակախոսական, գիտատեխնիկական գրական լեզվի տարբեր տեսակները՝ աչքաթող շանելով նաև թարգմանական գրականության որոշ տեղաշարժերի ազդեցությունը հայերեն շաղկապների համակարգի վրա:

Աշխատության առաջին մասում (էջ 7—84) քննության են առնված շաղկապների խոսքի մասային հիմնական առանձնահատկությունները, նրանց ձևաբանական կազմն ու կազմության տեսակները և արժեքավորված է շաղկապների պատմական զարգացման պրոցեսը. երկրորդ մասում (էջ 85—362) մանրամասնորեն ուսումնասիրված են համադասական և ստորադասական շաղկապների տեսակները, նրանց միջև եղած իմաստային հարաբերություններն ու երանգները, դրանք գնահատվում են ժողովրդական լեզվի տեսակետից, ցուցադրվում են ռուսաց լեզվի միջոցով պատճենավորվածները, սխալ գործածության դեպքերը, վերագնահատվում են հայ լեզվաբանների տեսակետները:

Շաղկապների ճիշտ բնութագրման համար հեղինակն անհրաժեշտ է համարում ընդունել նրանց իմաստային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշները միասնաբար (էջ 34), քանի որ հաճախ դժվար է լինում որոշել, թե ի՞նչ խոսքի մաս է տվյալ բառը՝ մակբայ, դերանուն, եղանակավորող բառ, թե՛ շաղկապ: Կապակցական դեր կատարելու տեսակետից շաղկապների հետ հարաբերակցվում են դերանունները, մակբայները, եղանակավորող բառերը:

Առանձին-առանձին քննելով շաղկապների ձևաբանական կազմը՝ հեղինակն ընդունում է հարաբերակցության երկու տեսակ՝ լիակատար և մասնակի, որոնք կապված են լեզվի շաղկապական միջոցների առաջացման և զարգացման տարբեր փուլերի հետ: Սկզբնապես բառն սկսվում է գործածվել խոսքի մասային համատեղ արժեքով, և, այնուհետև ամրանալով իր կապակցական պաշտոնում, ձևով է բերում նաև խոսքի մասային մի զուգահեռ արժեք՝ շաղկապական արժեք:

2. Աճառյանի «Արմատական բառարանի» տվյալների հիման վրա մենագրության մեջ նշված են արմատական բոլոր պարզ շաղկապները (և, ու, որ, թե, բայց, կամ, քան, այլ, էլ, ապա, երբ, իսկ, ոչ), որոնցից ինը (և, ու, որ, թե, քան, այլ, էլ, երբ, ոչ) հնդեվրոպական ծագում ունեն: Լրված են նաև պարզ շաղկապների մեջ մտնող եւրեմների բաղադրյալ շաղկապները (եթև, թեկուզ, թեկետ, միայն, մինչ, սակայն, ուրեմն, քանի նև) իրենց բաղադրիչներով: Շաղկապների երրորդ ենթախմբի մեջ են տեղադրված շարահարաբերական որևէ ձևով կազմված շաղկապները

(որովհետև, այնուամենայնիվ, բոտ որում, համեմայն դեպս...), Այնուհետև հանգամանորեն պար-
զարանված է բարդ շաղկապների ձևաբանական կազմը՝ ըստ կցական և հարադրական բարդու-
թյունների, Իսկական և բաղճյուսական հարադրությունները հատուկ շնն շաղկապներին, քանի որ
նման կազմություն ունեցող բառերից և ոչ մեկը չի փոխանցվել շաղկապի:

Շաղկապներով կազմված կցականները (այլև, թևակտև, թևև, մինչև, նաև, որպեսզի, քանզի) և՛ գրաբարում, և՛ արդի հայերենում շաղկապի դերով են հանդես եկել և, բացի սխալ շաղկա-
պից, մնացած վեց շաղկապները դրվել են լին՝ միասին և թև՝ առանձին (այլ + և, թևակտ + և, թև + և, նա + և, որպես + զի): Մինչև շաղկապը գրաբարում և արդի հայերենում գործածվում է
և՛ կուտ տարբեր խոսքի մասի արժեքով: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ եթե կցական կազմու-
թյուն ունեցող շաղկապների թիվը արդի հայերենում գրաբարի համեմատությամբ քանակապես չի
ածել, բայց, շնայած դրան, հիշյալ կազմությամբ շաղկապները որոշակի զարգացում են ունենցել
ներանց կիրառությունների ծավալման ուղղությամբ: Այդ պատճառով էլ քննականաբար, երբ խոսք է
լինում արդի հայերենի շաղկապական միոցների զարգացման մասին, միշտ պետք է նկատի առնենալ
հարադրական կազմությամբ շաղկապները, որոնց բաղադրիչները թևև գրվում են անջատ, բայց
արտահայտում են մեկ ընդհանուր շաղկապական իմաստ: Հարադրական այդ շաղկապների վեր-
լուծական ուղիով (սբ, թև, և շաղկապների հարադրություններով) կազմվել են աշխարհաբար
լեզվի ստորադասական հարաբերություններ արտահայտող բազմաթիվ շաղկապներ՝ հարստացնելով
արդի հայերենի շաղկապական համակարգը իմաստային և ոճական երանգներով: Այսպիսով, մե-
նագրության առաջին մասում ո՛չ միայն բացահայտված են շաղկապների խոսքի մասային հիմ-
նական առանձնահատկությունները, նրանց ձևաբանական կազմն ու կազմության տեսակները,
այլև արժեքավորված է շաղկապների պատմական զարգացման պրոցեսը և ցուցադրված նրանց
արդյունավետությունը ժամանակակից հայերենում:

Սույն աշխատության շուրջ 300 էջը նվիրված է շաղկապների նշանակությունների և նրանց
կիրառությունների նկարագրմանը: Հեղինակն առաջին հերթին պարզաբանում է շաղկապների
կիրառական բնորոշ առանձնահատկությունները: Իրանցից մեկն այն է, որ շաղկապները իրենց
գործածությամբ կարող են լինել մեկնադիր, կրկնադիր և հարստի: Հնդունելով այն փաստը, որ
շաղկապները նախապես մեկնադիր գործածություն են ունեցել՝ հեղինակը գալիս է այն հնտու-
թյան, որ ժամանակակից հայերենի շաղկապական համակարգը համալրվում է հարստանում է ո՛չ
միայն ի հաշիվ խոսքի մասերի հարաբերակցության դերով առաջացած, ինչպես նաև հարադրա-
կան եղանակով կազմված շաղկապների, այլև՝ զուգադիր շաղկապների բուռն աճի:

Վերապահության ընդունելով դպրոցական քերականության մեջ տիրապետող այն տեսակե-
սը, ըստ որի համադաս նախադասություններն իմաստային և շարահյուսական տեսակետից ին-
նուրույն և անկախ են՝ հեղինակն արդարացիորեն նշում է, որ համադաս նախադասությունները
շատ դեպքերում լրիվ ձևավորված չեն և շատ հաճախ նրանցից վերջադասները կախման մեջ են
առաջադաս համադասներից: Այսպիսով՝ մերժվում է բոլոր դեպքերի համար համադաս նախա-
դասությունների բացարձակ համազոր լինելը:

Մենագրության մեջ ընդարձակ պլանով և կոնկրետ օրինակների հիման վրա համակողմա-
նորեն պարզաբանված են արդի հայերենի շաղկապները, նրանց կիրառությունները բառակու-
պակցությունների, համադաս նախադասությունների, խոսքի տարբեր հատվածների և պարբերու-
թյունների միջև, նշվում են նրանց միջև դոյություն ունեցող տարբեր բնույթի իմաստային հարա-
բերություններն ու երանգները, դրանք արժեքավորվում են գրական և ժողովրդական լեզվի տեսա-
կետից, ցույց են տրվում նրանց շարադասական տեղն ու դիրքը, սխալ գործածության դեպքերը:
Հաշվի են առնվում շաղկապների ինտոնացիոն դերը, թարգմանական գրականության միջոցով
ռուսերենի շաղկապական միջոցների ազդեցությունը, պատճենավորումները, վերագնահատվում
են շաղկապների մասին եղած հայ քերականների տեսակետները: Ահա այսպիսի ընդարձակ և միև-
նույն ժամանակ հետարրերական պլանով են աուումնասիրված համադասական շաղկապների կի-
րառությունները:

Հաշվի առնելով համադասական նախադասությունների իմաստային հարաբերությունների
բնույթը՝ հեղինակն ընդունում է միավորիչ, հակադրական և յաժանական (կամ տրոհական) երեք
խումբը և այդ խմբերի մեջ մտնող շաղկապները բնության է առնում առանձին-առանձին (էջ
94—181):

Գ. Գրեկինյանի մենագրության վերջին բաժինը, ծավալով ավելի ընդարձակ (էջ 181—
361), հատկացված է ստորադասական շաղկապների մանրամասն քննությանը: Ստորադասա-
կան շաղկապները հեղինակը դասակարգել է ըստ նրանց ամենաընդհանուր և ամենահիմնական
հատկանիշների, որից հետո պարզաբանում է միևնույն շաղկապի իմաստային տարբեր կիրառու-

Սյունները Այսպիսով, եթե երկրորդական նախադասությունների գոյություն ունեցող դասակարգումը բնագծանրապես հիմնված է շարահյուսական հատկանիշների հաշվառման վրա՝ նկատի ունենալով, թե նրանք գլխավոր նախադասության ո՞ր անդամի ֆունկցիան են կատարում (ենթակա, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, ստորոգելիական վերադիր, խնդիր, պարագա), ապա հեղինակն իր աշխատության մեջ հատկապես կանգ է առել նախադասությունների միջև եղած հարաբերությունների և ամենաընդհանուր հատկանիշների վրա՝ ստորադասական շաղկապները բաժանելով 8 տեսակի (բացատրական, նպատակի, պատճառի, հետևանքի, պայմանի, ժամանակի և համեմատական):

Ստորադասական շաղկապների դասակարգման այդ սկզբունքը նպատակահարմար է այն տեսակետից, որ երբ նույն շաղկապը բազմիմաստ է և իր իմաստներով տարբեր խմբերի մեջ է ընկնում, իմաստային (շարահյուսական) բաժանումից հրաժարվելու դեպքում՝ ազատորեն կարելի է բացատրել նրա բոլոր նշանակություններն ու իմաստային երանգները: Այս հարցում ևս հեղինակը հաշվի է առել լեզվաբանության վերջին նվաճումները և այդ հիման վրա վերագնահատել է ավանդական քերականության տեսակետը ստորադասական շաղկապների մասին: Այսպես, նա գտնում է, որ ստորադասական շաղկապները կիրառվում են նաև ստորադասության համազոր անդամների, որպես խթնաբանության նախադասության ձևավորված ստորադաս մասերի, նախադասության տրոհվող լրացումների, ինչպես նաև միջանկյալ բառերի, բառակապակցությունների և միջանկյալ նախադասությունների կապակցման դերով:

Այսպիսով, ճշգրտակապակց հայերենում մենագրությունը հետազոտության առաջին փորձն է լեզվի զարգացման ներկա շրջանում ինչպես բուն շաղկապների, այնպես էլ շաղկապական դերով հանդես եկող բառերի համեմատական բնութագրի լրացուցիչ երանգների, հին և նոր կիրառումների մասին:

9. Գարեդինյանի ճշգրտակապակց հայերենում աշխատությունը, այս կարևոր արժանիքներով հանդերձ, ունի նաև թերություններ:

Ամենից առաջ պետք է ասել, որ հեղինակը Մեկ հրաժարվել է ստորադասական շաղկապների շարահյուսական դասակարգումից և ընդունել է շաղկապների ամենաընդհանուր հատկանիշների հիման վրա ութ տեսակի շաղկապների խմբեր, որպեսզի միևնույն բազմիմաստ շաղկապի մասին խոսվի միայն մեկ խմբի մեջ՝ լրիվ և ամբողջական պատկերացում տալու համար, բայց և այնպես այդ դասակարգումը հեղինակին այդպիսի հնարավորություն չի բնօրինակ, քանի որ մի քանի բազմիմաստ շաղկապներ՝ ուր, երբ, քանի որ և այլն, իրենց բացատրությունն ստանում են ոչ թե մեկ խմբի, այլ մի քանի խմբերի մեջ: Այսպես, օրինակ, ու շաղկապի մասին խոսվում է բացատրական (էջ 186—220), նպատակի (էջ 234—238), պատճառի (246—349), պայմանի (288—289) և ժամանակի (306—308) շաղկապների տեսակների մեջ, ճշգրտակապակցի տարբեր տեսակների մեջ են մտնում երբ (հակադրական՝ էջ 225, պատճառի՝ էջ 251, ժամանակի՝ էջ 294—308), քանի որ (պատճառի՝ էջ 245—246, ժամանակի՝ էջ 305) շաղկապները: Այս առիթով նշենք, որ համադասական շաղկապների դասակարգումը, բայց նրանց կապակցական բնագծանուր նշանակության տեսակետով են ճիշտ, և միևնույն շաղկապի մասին խոսվում է միայն մեկ տեսակի մեջ (տե՛ս էջ 94—180):

Ընդհատ է, որ շնայած բարձր արժեքի հայերենում տարածված է թե՛ կապական և թե՛ շաղկապական կիրառություններով (էջ 51), բայց մնում է չհիմնավորված, թե ինչու շնայելով ձևը պետք է համարել ուսուցիչի несмотря բառի օրինակով կազմված (համեմատիկ նայել-նայելով, տեսնել-տեսնելով, շնայել-շնայելով, շտեսնել-շտեսնելով): Կենդանակի շտեսնելով ձևն է՛լ պետք է ուսուցիչի неувидя բառի անալոգիայով կազմված լինենք: Համոզվելու համար, որ նման ձևերը եղել են դեռևս գրաբարի սկզբնավորումից շրջանում, բերում ենք հորինացուց հետևյալ օրինակները. Վրբելով անպաճուճաբար և առանց անելորդացա, ձևակերպ. թե Արիւն իմ հարազատութիւն, բնդիւր անուցեսա:

Խոսելով համադասական և ստորադասական շաղկապների և նրանց արտահայտած շարահյուսական հարաբերությունների մասին՝ հեղինակը նշում է. «Թեև համադասությունը և ստորադասությունը դիտվում են որպես շարահյուսական-տրամաբանական տարբեր կատեգորիաներ, սակայն լեզվում գոյություն ունեն բարդ նախադասության այնպիսի կառուցվածքներ, որոնք տանվում են համադասության և ստորադասության միջև» (էջ 89): Վերադառնալով նախադասության շաղկապուցիչ մասերը իրենց շարահյուսական կախվածության աստիճանով միջին դիրք են զբաղում (էջ 344, բնագծանուր մերն են, Ս. Մ.): Այս միտքը, որ միանգամայն ճիշտ է, հեղինակը հիմնավորում է «ինչպես անսպասելի հայտնվել էր, այնպես էլ միանգամից ծածկվեց ծիախտի անտառում» նախադասությամբ: Սակայն, ինչպես այս օրինակից երևում է, վերոհիշյալ նախա-

դասությունը տիպիկ ստորադասական նախադասություն է և բոլորովին էլ միջին դիրք չի գրավում, բանի որ այս բարդ նախադասություն առաջին մասը հեշտությամբ կարող է տարրալուծվել երկրորդ նախադասության մեջ (ժանսպասելի հայտնվելու նման (պես) էլ միտնգամից ծածկվեց յխախտտի անտառում»): Սա բարդ ստորադասական նախադասություն է, որ կապակցվում է ինչպես... այնպես հարաբերական-հարաբերությամբ, որտեղ հաւարեւակսնով արտահայտված նախադասությունը երկրորդական նախադասությունն է, իսկ հաւարեւակսնով գլխավորը (համեմատի՛ր ինչպես կուզես, այնպես արա—արա ուղածիդ պես):

Որպես համադասության և ստորադասության միջին դիրք գրավող նախադասության տիպիկ օրինակ կարող է ծառայել գրախոսվող շլյախտության 46-րդ էջում նշված «որքան արևը բարձրանում էր, այնքան (շափիթ պարագա) հանապառհի անցուղարձը ավելի կենդանություն էր ստանում» նախադասությունը, որտեղ ավելի (ածականի բաղդատական աստիճան) բառով նշվում է բարդ նախադասության փոխադարձ կախվածությունը: Այս օրինակում բարդության երկու մասերն իրարով փոխադարձաբար պայմանավորված են և նրանցից մեկի տարրալուծելը մյուսի մեջ բացառվում է: Ուստի՝ որքան... այնքան շողկապները (հարաբերական, հարաբերյալ) ավելի մակրայի հետ երկակի բնույթ ունեն. իմաստով՝ համադասական, կապակցությամբ՝ (այնքան... ու քան) ստորադասական: Այսպիսի նախադասությունները համատեղվում են նաև բայի ժամանակներով, առանձնապես րիձական և պայմանական եղանակների ժամանակներով: Օրինակ՝ որքան ավելի լինես, բան էիր, այնքան ավելի մեծ մարդ կլինես, «որքան ավելի նա ճիգ գործդես հօգուտ կասսիոյի, այնքան իր վարկը մավրի մոտ կընկնի» (Շեքսպիր): Ինչպես երևում է, այս տիպի նախադասությունները դրսևորում են երևույթների, հասկացությունների պայմանավորվածությունը, բարդության մեկ նախադասությունը միշտ պայմանավորված է մյուսով: Ի տարբերություն բարդ ստորադասական նախադասությունների կառուցվածքի՝ որքան... այնքան հարաբերական-հարաբերությամբ և բաղդատական աստիճան կազմող ավելի բառով նախադասությունները չեն կարող կազմալուծվել մեկ նախադասության մեջ, ինչպես այդ հատուկ է բարդ ստորադասական նախադասություններին:

Սակայն այն դեպքում, երբ որքան... այնքան բառերով կազմված բարդ նախադասության մեջ չի նշվում բաղդատական աստիճանը՝ ավելի բառը, այդպիսի նախադասությունները տիպիկ բարդ ստորադասական նախադասություններ են և հեշտությամբ կարող են պարզեցվել, կազմալուծվել և արտահայտվել մեկ նախադասությամբ: Օրինակ՝ «կուղբի լինելը երկրիս ապագան այնքան լուսավոր և այնքան մաքուր, որքան ալքերիդ ժպիտը պայծառ» (Զարենց): Պարզեցնելով այս նախադասությունը՝ կստացվի. «կուղբի երկրիս ապագան ալքերիդ պայծառ ժպտի լուսավոր և մաքուր լինելու»: Միջին դիրք գրավող կառուցվածքով նախադասությունները մոտենում են բարդ համադասական նախադասություններին նրանով, որ նրանց մեջ մտնող պարզ նախադասությունների գործողությունները մեկը մյուսին են հաջորդում, բայց և այնպես նրանց անջատելն անհնարին է, ինչպես կարող են անջատվել (անկախ գործածվել) համադասություն կազմող նախադասությունները: Ահա և այս տիպի նախադասություններն են, որոնք համադասական և ստորադասական նախադասությունների միջին տեղն են գրավում:

Թեև հեղինակն ավելի մանրամասնորեն ցույց է տվել երև շողկապի կիրառությունները (էջ 272—292), բայց և այնպես այս շողկապի մի շարք կարևոր կիրառություններ աչքաթող են արված: Այսպես՝ եթե շողկապը բաղդարկելով նույնիսկ, անզամ, դարձյալ սաստկություն արտահայտող բառերի հետ արտահայտում է պայմանի հարավորություն, որին հակադրվում է գլխավոր նախադասության գործողությունը. օրինակ՝ երև նույնիսկ նա իր սխալի մեջ համոզվի, դարձյալ կհամառի: Եթե նույնիսկ շողկապը այս դեպքում կարող է փոխարինել բեկուզ, թեև, բեկետ շողկապներին: Մի բանի դեպքերում երև շողկապը միանում է ոչ միայն ապա. իսկ հակադրական շողկապներին, ինչպես նշում է հեղինակը, այլև բայց, օակայն հակադրական շողկապներին. օրինակ՝ «Բայց երև դուք կասկածում եք, ես կկարդամ նամակը» (Մուրացյան), «իսկ եթե այդ բանն իմանա կիպարիտ կեռնյանը, դուք ինչ պատասխան պիտի տաք» (Ն. Զարյան): Այս օրինակներից երևում է, որ գլխավոր նախադասությունը միշտ վերջադաս է լինում և առաջադաս նա չի կարող լինել, որովհետև հակադրության իմաստն արտահայտվում է ստորադասական նախադասության մեջ, իսկ գլխավոր նախադասությունն այդ հակադրության հետևանքն է:

Ստորադասական նախադասության հետևանքի-պատճառի իմաստը գլխավոր նախադասության մեջ կարող է ընդգծվել ոչ միայն ուրեմն, ինչպես նշել է հեղինակը, այլև հետևաբար, ուստի բառերով, որոնք եզրակացության իմաստն ավելի ուժգին են դարձնում, Օրինակ՝ «եթե դուր ցանկություն ունեք ծառայելու այն հասարակության, այն ազգին, որին սիրում և որին պատկանում եք, ուրեմն (հետևաբար, ուստի) ընտրեք այն մասնագիտությունը, որ ես կառաջարկեմ» (Մուրա-

ցան)։ Այստեղ երև շաղկապով յուրադատական նախադասությունն արտահայտում է այն պայմանը, որ առաջ է բերում հետևանք։

Սրև... տալա շաղկապով նախադասությունը կարող է արտահայտել պայմանի-անջատման հարաբերություն, այսինքն՝ ստորոգաս նախադասության մեջ բացթողում է արվում, որը լրացվում է գլխավոր նախադասությամբ. այս կառուցվածքով նախադասությունների մեջ գլխավոր նախադասության ապա շաղկապի փոխարեն կարող են գրվել բայց և այնպես, դարձյալ և այլ սահմանափակող շաղկապներ ու մակրայններ, որոնցով սահմանափակվում է այն, ինչի մասին ասվում է երկրորդական նախադասության մեջ, Օրինակ՝ «Սրև նախադասի աղբիլը մինչև անգամ հրեշտակ լինեը, ես դարձյալ չի համոզիլ նրա հետ ամուսնանալս» (Մուրացան)։

Հակադրությունի իմաստ ունեն նաև այնպիսի նախադասություններ, որոնց մեջ գլխավոր նախադասության ապա շաղկապին փոխարինում է դրա փոխարեն բառակապակցությունը. ինչպես՝ «Բայց երև օտար լեզուներից որոշ բառեր հայոց լեզվում մնացել և բաղաբացիական իրավունք են ստացել, դրա փոխարեն (կամ փոխարենը) ժամանակի ընթացքում շատ բառեր էլ փոխարինվել են հայերենով»։ այս դեպքում հակադրությունն սվելի է ընդգծվում, որովհետև դրա փոխարեն կամ փոխարենը ցույց է տալիս հակադրություն։

Սրև շաղկապով սկսվող երկրորդական նախադասությունը կարող է ցույց տալ Երկու գուրծողությունների նմանության պայմանը, որից առաջ է գալիս հետևանք. օրինակ՝ «Մեզինց ամեն մեկի իսկական տունը և հարազատ քայստանությունը հարազատ հայրենիքն է։ Սրև մենք մեր անձնական, մեր անցողական հաճույքի համար վտանգում ենք նրա խաղաղությունը, նման ենք այն մարդուն, որ յուր մարմինը տաքացնելու համար վառում է յուր տունը, շմտածելով, որ Երբ այդ կրակը հանգչի, Երբ հարկի տակ սյունները մոխիր դառնան, ինքը պիտի մնա անտուն, անպաստան, միշտ հալածական դառնաշունչ հողմերից կամ արևի կիզիչ ճառագայթներից» (Մուրացան)։ Սրև շաղկապի կիրառությունները, ինչպես հեղինակն է նշում, խիստ տարածված են պարզ նախադասության կազմում (էջ 280), բայց միայն երև գեպը է նշում (ենթադրություն, ցանկություն, անվճռական ցանկություն), սակայն պարզ նախադասության մեջ այդ շաղկապը կարող է արտահայտել նաև երկյուղ, ինչպես՝ «Իսկ եթե ստիպել յուր ներկայությամբ գրել (Մուրացան), իսկ եթե այդ բանն իմանա իրպարիտ Լեոնյանը» (Ն. Ջարյան), հոնտորական հարցում. որ շատ հատուկ է և մենախոսություններին և երկախոսություններին. օրինակ՝ «Բայց երև վերջին կայծն էլ մարած է արդեն, երև իմ սիրտը բաբախում է վրեժխնդրության համար» (Մուրացան). զգացմունքի շափի ուժեղացում, որ մոտ է երանի՝ բառի իմաստին. ինչպես՝ «Ախ, երև վերջին անգամ կարողանայի տեսնել նրան» (Նար-Պոս, «Քնրուչ լարեր»)։

Սվ, վերջապես, երև շաղկապը կարող է ցույց տալ խնդիր, որը գլխավոր նախադասության մեջ արտահայտվում է շատ վերացական ձևով և միայն հայտնի է դառնում երկրորդական նախադասությամբ. օրինակ՝ «Նա ոչ այլ ինչ էր, երև ոչ խոնավ, մութ, փոքրիկ պատուհանով մի խցիկ» (Մուրացան), «Վառողյանը, որը, վերջիվերջո, ոչ այլ ինչ է, երև ոչ խղճուկ մի վարժապետ» (Չարենց)։

Մենք այս լրացումները կատարեցինք ցույց տալու համար ոչ այնքան Գ. Գարեգինյանի ախառության թերությունները, որքան ժամանակակից հայոց լեզվի շաղկապների արտահայտած բազմազան հարաբերությունները նշելու համար, որը, անշուշտ, հեղինակն սպառել չէր կարող։

Իր աշխատության մեջ հեղինակը գտնում է, որ «կարծես և ասես շաղկապները կապված են գրաբարի սահմանական եղանակի ներկա ժամանակի ձևերի հետ և ոչ թե աշխարհաբարի բղձական եղանակի ձևերի»։ Բայց չէ՞ որ արդի հայերենի բղձական եղանակը առաջ է եկել գրաբարի ներկա և անկատար անցյալի ժամանակների իմաստի շրջումով, Հետևաբար՝ գրաբարի և արգի հայերենի այդ նշված ժամանակների միջև ձևական ոչ մի տարբերություն չկա։ Այլ բան է, եթե ասված լինել, թե այդ բառերը կապակցական դերով հանդես են եկել աշխարհաբար լեզվում։

Բոլորովին համամիտ չլինելով հեղինակի արտահայտած այն մտրին, թե երբ սակայն բառը ենթակայի և ստորոգյալի միջև է գործածվում, արտասանական որոշ զագարով այն բաժանվում է նսխորդ և հաջորդ բառերից (էջ 153), պետք է նշել, որ, ընդհանրապես, միջանկյալ բառերը միջադաս լինելու դեպքում ո՛չ թե հաջորդ և նախորդ բառերից արտասանական զաղաբներով են բաժանվում, այլ միայն մեկ զաղաբով՝ կամ նախորդ կամ հաջորդ բառերից. այլ խոսքով, միայն ի կողմից (խոսքը չի վերաբերում կետադրությանը), բանի որ միջադաս միջանկյալ բառերը իմաստով կապված են լինում կամ նախորդ կամ հաջորդ բառերի հետ։ Հենց հեղինակի բերած «ենյո սիրային լուր բանակցությունները, սակայն, տխուր վախճան ունեցան» նախադասության մեջ միջանկյալ բառի պաշտոնով հանդես եկող սակայն բառից հետո (թեև ընկած է ենթակայի և ստորոգյալի միջև) արտասանական դադար չի տրվում, բանի որ սակայն միջանկյալ բառը

իմաստով կապված է թոխուր վախճան ունեցանք կապակցության մտքի հետ: Համոզվելու համար՝ նույն նախադասության սակայն միջանկյալ բառը կարելի է փոխարինել տարաբախտաբար, դրժ-րախտաբար. ցավով սրտի և նման միջանկյալ բառերով: Հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ միջանկյալ բառը նախադասության սկզբից կամ վերջից չի դրված, այլ նախադասության ներսն է բնկած՝ արտասանական դադար միայն մի կողմից է տրվում, կախված նրանից, թե միջանկյալ բառը իմաստով նախորդ թե՛ հաջորդ անդամների հետ է կապված:

Գրախոսվող աշխատության մեջ կան նաև լեզվական թերություններ և վրիպակներ, ինչպես, օրինակ՝ ռեզիդենտի տարածված են նաև Խրք շաղկապի այն կիրառությունը (էջ 225). ժկյո սերմինով բացատրվում է նախադասության մեջ որևէ պաշտոնով հանդես գալու հնարավորությունը (էջ 39) և այլն, որոնք առանձին որակ չեն կազմում, որովհետև բացառություններ են:

Գ. Գարեգինյանի ժամանակակից հայերենում մենագրությունը լուրջ ներգրում է հայագիտության մեջ, որ շատ օգտակար է լատասիրական ֆակուլտետների ուսանողների, հայոց լեզվի ուսուցիչների և գրողների, ինչպես նաև հայոց լեզվի շարահյուսությամբ զբաղվող մասնագետների համար:

Խ. Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ,

